

PAGE

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Հ. Յ. ԹՈՐՈՍՅԱՆ. - Ս. Էփրեմ և իր հասարակարգը «Յայ-
լակերպութիւն Տեան» (շար. և վերջ) . 210

ՊՐՈՖ. Լ. ԳՐԵԿԻԱՆ. - Էթնոգրաֆիկ լուսանկարներ
դրանք 1655 թվականին (շար. և վերջ) . 215

ԳՐԱԿԱՆ

Հ. ՄԵՍՐՈՊ ՏԱՆՈՇԵԱՆ. - Բագրատունի և Օշա-
կան . 197

ՇԱՐԼ. ՊՈՏԼԵՐ. - Ալբատրոս (թրգմ. Հրաչ Քաջա-
րեան) . 214

» » - Կոյրերը (թրգմ. Հրաչ Քաջա-
րեան) . 214

Հ. ՎԱՀԱՆ ՅՈՎՀԱՆՆԵՍԻԱՆ. - Տխրութիւն աչքերու
» » - Ժամն է հիմա . 221

ՆԵՐՍԵՍ ԳՈՍՈՊԵԱՆ. - Յարգանքի տրիտուր մը
Հայ լրագրութեան հիշատակին («Բազմա-
վէպ»-ի հարկերամեակին առթիւ) . 234

ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ

ՏԱՐՏ. Ս. ՏԵՎԵՐԴՅԱՆ. - Հայկական հարաբա-
րակութեան մէջ ներդաշնակութեան կանոն-
ներու պրպտութիւնը (շար. և վերջ) . 222

Յ. ԱՇՐԱԾԵԱՆ. - Համայնապատկեր շարժանկարի
պատմութեան (շար.) . 229

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՐՁԱԳԱՆԴ

ԽՄԲ. - Գործերն Ա. Կաթողիկոսի Յորհեանք
Փարիզի մէջ . 240

Հ. ՆԵՐՍԵՍ ՏԵՐ-ՆԵՐՍԵՍԻԱՆ. - Հայկական Ս. Պա-
տարազը Պոլսոյ մէջ . 242

Ա. Ե. - Հշտութիւն . 244

ԳՐԱԹՕՍԱԿԱՆ

Հ. Ն. Տ. - Ա. Սալմասլիանի «Bibliographie
de l'Arménie». տպ. Փարիզ, 1946 . 244

PHILOLOGIE

P. Jean Thorossian. - St. Éphrem et son
homélie sur la Transfiguration de
Jésus-Christ (fin) . 210

Prof. L. Gurékian. - Le Carême à Etch-
miadzine en 1655 (fin) . 215

LITTÉRATURE

P. Mesrob Djanachian. - Pagratouni et Ocha-
gan . 197

Charles Baudelaire. - Albatros (trad. par
Mr. Hratch Katcharentz) . 214

» » - Les aveugles (trad. par
Mr. Hratch Katcharentz) . 214

P. Vahan Hovhannessian. - Tristesse des yeux . 221

» » - C'est l'heure . 228

Nersès Kassabian. - Hommage au Vétéran
du Journalisme arménien (à l'occa-
sion du Ier Centenaire de la Revue
«Pazmaveb») . 234

BEAUX ARTS

Ing. S. Djéghirdjian. - Essai sur les règles
d'harmonie dans l'architecture ar-
ménienne (fin) . 222

Y. Achrafian - Panorama de l'histoire du
Cinéma (suite) . 229

ECHO ARMÉNIEN

Réd. - Le Jubilé de S. B. le Catholico
Karékine I, célébré à Paris . 240

P. Nersès Der-Nersessian. - La S.^{te} Messe
arménienne à Bologne . 242

A. E. - Rectifications . 244

RECENSION

P. N. D. - A. Salmasian «Bibliographie de
l'Arménie» éd. Paris, 1946 . 244

ԲԱՉՄԱՎԵՊ

ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ - ԳՐԱԿԱՆ - ԳԵՂԱԿԱՆ - ԲԱՐՈՅԱԿԱՆ

1843 - 1948
106-րդ ՏԱՐԻ



ՍԵՊՏԵՄԲԵՐ-ՆՈՎԵՄԲԵՐ
ԹԻՒ 9-10

ԲԱԳՐԱՏՈՒՆԻ ԵՒ ՕՇԱԿԱՆ ¹⁾

Բագրատունի և Օշական՝ դրուած այս-
պէս զէմ զէմի, թերեւս շատերուն
յանկարծադէպ նորութիւն մը թուի: Բայց
անոնք որ քիչ մը հետեւած են այս վերջին
տարիներուն Օշական-ական քննադատու-
թեան, մասնաւորապէս Մխիթարեան գրող-
ներու՝ Բագրատունիի, Աւիշանի և Հիւր-
միւղի հանդէպ իր բռնած դիրքին, իսկոյն
պիտի տեսնեն թէ Բագրատունիի մասին
մեր յօդուածաշարքը վերջացնելէ առաջ՝
անհրաժեշտութիւն մըն էր ներկայ մերձե-
ցումը:

Արեւմտահայ Գրականութեան ՀԱՄԱՊԱՏ-
ԿԵՐ-ի հեղինակը անմանօթ մը չէ, և ոչ ալ
զինքը կառավարող գրական մտայնութիւնը,
որ վարակիչ ախտի մը պէս միամիտները
հրապուրած, գրական հասունութիւն ունե-
ցողները միւս կողմէն՝ գայթակղեցուցած և
զայրացուցած է: Չպակեցան վերջիններուն
շարքէն՝ ոմանք որ հրապարակ ալ իջան
իրենց կարծիքը ըսելու, վարպետին չափա-
զանցութիւնները ուղղելու, մտասեւեռում-
ները զարնելու հակակշոր՝ նկատմամբ այն
կէտերուն, որոնք իրենց հասկցածին սահ-

մանին մէջ չէին համապատասխաներ իրա-
կանութեան:

Բնականաբար Մխիթարեանի մը պիտի
վերապահուէր պարտքը՝ անդադառնալու
նկատմամբ այն կէտերուն, որոնք ուղղակի
կը շօշափէին Մխիթարեան գրականու-
թիւնը:

Օշական արդիական մըն է բառին սեղմ
իմաստով, արդիականութիւնը առած գրա-
կան յեղափոխութեան նշանակութեամբ: Գեղեցիկ ձեռնարկ է գիտնալ յեղաշրջել,
քրքրել անդաստանի հողը, մաքրելու համար
զայն որոմներէ, անպէտ ու խափանող տար-
րերէ՝ եթէ այդ ձեռնարկին կ'ընկերանայ
գերազանցօրէն կշռադատ իմացականութիւն
մը, որ ճշմարիտ գեղեցիկը կը զատորոշէ

(1) Ներկայ յօդուածը, որ լոյս պիտի տեսնէր «Բազ-
մավէպ»-ի Յունուար-Փետրուար թիւին մէջ, ի լուր
ողբալի մահուան Օշականի՝ որ սրտի կաթուածի զոհ
կ'երթար Հալէպի մէջ Փետրուար 17-ին, հասկնալի
պատճառներով յետաձգուեցաւ, յարգելու համար անոր
յիշատակը՝ որ այլևս բաժնուած իր սիրելիներէն, բաժ-
նուած մանաւանդ իր այնքան սիրած հայկական գրա-